



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԵՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ


Գիտական, Գրագիտական, Առևտրագիտական
և Մանկավարժական



1902 ՆՈՅԵՄԲԵՐ 10 — ԹԻԻ 34

ՀԱՅԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:



ՄԱՅԻՔԱՆՄԱՅ

ՄԱՅԻՔ

ՅԱՄԱՆՈՐԱՅ

Մալաքիանուր, Մալաքիան, Մալաքիան
Մալաքիանուր



1902 ՆՈՐԱՐԵՐ 10 — 11 1902

ՄԱՅԻՔԱՆՄԱՅ

Մալաքիանուր Մալաքիան Մալաքիան
Մալաքիանուր Մալաքիան Մալաքիան



ՀԱՆՐԱԿԻԴԱԳՈՒ

هنا را كيداغ

HANRAKIDAGUE

ՏԱՍՆՕՐԵԱՅ


مجموعه علوم

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԿԻՆՆԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 34

10. ՆՈՅԵՄԲԵՐ 1902



ՏԱՐԵԴԱՐՁ ԾՆՆԴԵԱՆ

ՕԳՈՍՏԱՓԱՌ ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԻՐ

ՍԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԻՆ ԹՈՒՐԲԻՈՅ

Ծ Ն Ն Դ Ա Տ Օ Ն

ՕԳՈՍՏՍԱՓԱՌ ՓԱՏԻՇԱՀԻՆ

Թուրքիոյ նշանաւոր ԻնֆլԱկԱԼԻՆ ույն նուիրական Տօնադարձն մեծ չքով այս տարի եւս կատարուեցաւ Մայրաքաղաքին թէ նահանգաց մէջ Իսլամ Քրիստոնեայ թէ բազմամիլիոն աշխարհներուն յատուկ խանդավառութեան այնպիսի բացայայտիչ ցոյցերով ուր երկրին ամբողջ ժողովուրդներու պաշտօնական թէ անպաշտօն դասակարգեր, սկսեալ իրենց գերադրական աստիճաններէն մինչեւ իրենց պարզ խաւեր, հոծացընելով իրենց հաւատարմական, երախտագիտական, համակրական մեծավայելուչ զգացումներն ու մտածումներ, հրապարակաւ աղօթքներու, երգերու, ճառերու, ծափերու, կեցցէներու, գիշերային լուսավառութեանց ու ցերեկային հանդիսաւորութեանց մէջ, սովոր են ու պարտաւոր արտայայտել առ սիրեցեալ Վեհապետ որ աշխարհի բոլոր վեհապետաց մէջ ու համար, իր բազմացեղ ու բազմակրօն ժողովուրդներն ու հպատակներ քաղաքակրթելու, սիրաշահելու, պաշտպանելու ու կառավարելու իրեն եւ եթ յատուկ ու ծանօթ մենաշնորհ վերին իմաստութեամբ եւ աշխարհավարական հռչակեալ մեծամեծ ու բիւրազգի գործերովն անզուգականն է, ու պիտի մնայ միշտ:

Մեր միահեծան Վեհապետն ասոր համար շատ աւելի կ'սիրենք, եւ իրեն թանկագին կենաց երկարօրութեան համար աւելի ջերմեռանդութեամբ կ'աղօթենք, վասն զի իր կայսերացուն Ծնունդ Թուրքիոյ վերածնունդը հանդիսացած է, բաղդատութեանց մէջ անհամեմատելի ու քաղաքակրթական առաջդիմութեանց շնորհիւ որք գործուեցան ու կը գործադրուին երկրին բոլոր պաշտօնական թէ անհատական հանրօգուտ ու բարենպատակ հաստատութեանց նախաձեռնութեանց մէջ:

Ապա կայսերական Ծննդատօնին առթիւ, առ Արքայից Արքայն արտայայտուած բոլոր վեհապետներուն, ամէն ժողովրդոց Պետական ներկայացուցիչներուն միահամուռ խնդակցութեանց ու բարեմաղթութեանց

հետ, միացնելով նաև իրեն հետ արդէն վաղուց հաւաքական ձայնակից ունենալով Հայ Ազգն ու Հայ մամուլը ցնծանօք կը շնորհաւորէ Հանրագիտակ իր ամէն դասու ու սեռի ընթերցողներով սոյն հանդիսաւոր Օրն ու կ'բարեմաղթէ առ Աստուած որ ամէն տարի Թուրքիան եւ համայն աշխարհ բախտաւորի տեսնել ու վայելել Անոր բարեբաստիկ վերադարձին յատուկ ու արժանի բոլոր արտասովոր ցոյցերն ու տպաւորութիւնները:

Օսմանեան մեծագոր Փատիշահին Ծննդատօնի այս նոր տարեդարձն այս տարի աւելի աճուն ու զեղուն երախտագիտութեամբ կ'փառաւորէ Հայ Ազգը նկատմամբ այն նշանակելի բարձր շնորհներուն որ այլ եւ այլ կարգի նշաններով զարդարեցին մեր դաս մ'ալ կրօնականաց ու աշխարհականաց կուրծքերն ու վարձատրեցին անոնց գնահատելի ծառայութիւնները: Ամէն ժամ ոչ միայն աղօթող ենք, այլ եւ աղօթողներ կը հասցնենք վասն արեւշատութեան մեր հռչակաւոր կայսեր, կ'ձայնարկենք ուրեմն ՀԱԶԱՐ ԱՊՐԻ մեր ՕԳՈՍՏՍԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆՆ որ հազարաւոր շնորհներով ու բարիքներով միշտ կ'օժտէ իր միլիոնաւոր հպատակաց հետ եւ մեր Հայ ժողովուրդը, որ իր դաւաւոր հաւատարմութեամբ եւ ամենօրեայ երախտագիտութեամբ այնքան արտովին փարած է Օսմանեան փառապանծ գահուն:

Կեցծէ նորին կայսերական Վեհապետութիւնը, հանդերձ իրեն յաղթական բանակներով, նորաշէն նաւատորմիդով, հանդերձ իրեն արժանի լուսամիտ նախարարներով ու ամէն ցեղի ու կրօնի միլիոնաւոր հպատակներով:

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ



ՎԱՆՔԻՆ ՀԱՄԱՅԻՆ

— « Եստ մի պողար, տղաս, մայրըդ տկար է. Բիչ մը վերջ տուր աղմկալից քու խաղին, Նայէ մօրկանդ աչքերն ինչպէ՛ս նուաղին. Անմեղ խաղերդ տանել անգամ չը կարէ » :

Վահէն շուտով ծայնը կտրեց քաղցրալուր, Մինչդեռ մայրը անկողնի մէջ տառապէր. Հայրիկն անդին զաղտնի արցունք կը թափեր. Ինքն ալ մօր քով նստաւ տրտում ու տխուր :

Մուկը տիրեց, պատեց բոլոր գիւղն համակ, Կինը՝ կարծես, այս միտնեան անհամբեր՝ Կը սպասէր զի վերջին քունը մը փութէր : Միտնեանը մահուան յարմար ցուրտ վերմակ :



* * *

Կիսանուաղ աչքեր մօրկան փակուեցան, Հեծեծանքի տխուր շեշտեր առին ծայն. Վահէ ապշած այս ծայներէն լալագին, Հարցուց - « Ինչո՞ւ խռովէք քունը մայրիկին » :
— « Դուն ալ որդեակս, դուն ալ որբա՛ մեծածայն, Քանզի մայրիկդ ալ չը լսեր, հոս չէ ան » :

— « Զէ հայր իմ, չէ, մեռած չէ մայրիկ : Երբ ննջէի օրօցքիս մէջ անուշիկ, Համբոյներէդ՝ զոր փուտայիւր կ'ընդունէի, Աչուներս հեգիկ կերպով բացուէին » :

Եւ խօսքին հետ ինկաւ մօրը երեսին, Արագ արագ համբոյր տուաւ կենսածին .
Մայրը, զարմանք, համբոյրներէն սկսեց, Զայնով մ'անուշ ըսաւ « Խնդրեմ ալ Աստուած, »
« Միամտուկ զաւկիս սիրոյն փոխարէն .
Զիս ազատէ մահուան միտն ստուերէն » :

* * *

Աստուած յուզուած՝ այս միամիտ արարքէն, Հաճեցաւ որ մայրը զաւկին շնորհէն :

Ամասիա

Անիիկնէ



ԿԻՐԱԿԻԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

« ԿԵԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ »

Տեսա՞ծ էք երբէք, մարդուն կեանքը ներկայացնող պատկերը, այդ կէս բոլորակաձեւ պատկերը, զորս վրձին մը գծէր ու նուիրեր է մարդուն, անոր հոգածին կեանքի շրջանին սահմանովը, ծնունդէն մինչեւ գերեզմանը խորհրդաւոր ընդելուզումի մը մէջ դրած, խնամքով զետեղելով դրախտին մարդը հողէ մարդուն մահու անկողնոյն տուրնթեր :

Որհնդաւոր է ան շիտակը, որքան բերկրայի իր ծնունդին մէջ, այնքան տխուր իր վերջաւորութեամբը : Դէմն է ան. երբեմնի ուշադրութեանս առարկան, անցնող կեանքի պատրանք քօղովը պարուրուած այդ հուրինները, որոնք — զիտեմ — անցնող են միշտ. լուսատու բայց տարածամ : Տեսնել ու անցնել սակայն, անտարբեր սրտի մը, անզգայ հոգիի մը գործը պիտի ըլլար : Միշտ դէմս է ան, ո՛ւր կը դիտեմ պիշ պիշ, երեւակայական հմայքի մը ու սրտի տարբեր խտխտանքի մը մէջ, հալեցնելով անոնցմէ իւրաքանչիւրը, հասնող կեանքիս խօլ երազանքին բոց ... , է՛հ թերեւ անիրականալի վաղքին մէջ :

Կէս բոլորակաձեւ ըսի, անոր համար որ տարեր պետեղեր են իրարմէ զգալապէս հեռու այդ կեանքերը, միամիտօք սանդուխի մը վերելքին ու վարէջքին վրայ, ճիշդ կիսագնդին պէս, Արեւին դիրքովը, զոր իր ծագումը ունի առատուն, աղսւոր ու կեանքօտ եւ երկար ու անդիմադրելի շրջանէ մը

վերջ կ'երթայ թաղուիլ ստուերոտ հորիզոնէն անդին, մութ ու ամայի: Մարդուն կեանքն ալ այնպէս չէ՞ սակայն: Կը ծնի ա'ն խինդ ու խանդ ցանցնելով չորս դին և կեանքի պայքարուտ գծէն խիզախ վազքով մը սահելով, կը հասնի անվրէպ իր վերջի կայանը:

Վճռուած նկարագիր մը — եթէ կը հաւատաք անոր — ամենուս համար ալ. բանական մարդէն մինչեւ յետին կենդանին, յետին բոյնը, ամենուն առ հասարակ:

Հուսա նորածին մը, անգիտակից կեանքէն, իր խաղաղ ու անդորր մրաբին մէջ: Հունա Տղայ մը, չարածնի թիթեռնիկ, միշտ ցատկոտող մէկէն միւսը իր խաղին իր կամքին: Քիչ մը վերը կայտառ ու կրակոտ պաւսանին որ սկսած էր ճանչնալ թէ աշխարհ մը կայ հրապուրիչ: Աւելի վերը՝ հասուն երիտաւրդը որ քայլ կ'առնէ դէպ ի ընկերականութիւնը: Եւ քիչ մը վերը մարդը՝ զոր նա ալ կը կարծէ ճանչցած ըլլալ տիեզերքը, իր նմանը, և գիտցած թէ՛ ապրիլ կայ իբր մարդ, ու կարեւոր անդամ մ'է ինքն իր կարգին համաշխարհիկ ընկերակալութեան:

Հասած ես կատարը:

Առոյգ, պարտաճանաչ ու ապրող մարդն է հոն: Որքան վսեմ է ան իր դիրքին ու կեցուածքին մէջ, մէկ անգամէն արդէն կենդանի պատկեր մը բարոյականի մարդուն:

— Ո՞րքան աղէկ պիտի ըլլար եթէ հոգ մնար սակայն իր ֆիզիքական ու մտային վիճակը պահած:

— Հիանալի բան:

Երջան մ'է ըսինք. իջնենք ուրեմն աւելի վար, հոն հանդիպելու համար պաւսկառանքի մարդուն, փորձառու մարդուն:

Եւ նոր բաժնուած անկէ ալ, անվրէպ կը հասնիս գաւազանի կռթնած սա վսեմ դէմքին, ալեւոր մարդուն, զոր հիմա, նոր սկսած է հասկնալ թէ սեւ են ամէն ինչ, թէ՛ գծած է ա'ն իր անցնող կեանքի ուրուագիծը եւ թառամելու մօտ երեւակայութեանը առջեւ բերած, զետեղած ու փորձուած սա՛ անխուսափելի ճշմարտին առջեւ թէ «մարդ իր համար ապրելու եկած չէ, թէ մարդ անձնիշխան չէ, թէ մարդ իր ընկերոջը օգտին պէտք է սահմանէ իր ունենալիք բոլոր կեանքը»:

Իջիր վար: Աւելի ծերուկ մը ահա այս անգամ. Սակայն հրեշտականման թռուիկ մը ունի գիրկը: Դողդեացող ձեռներուն տակ իր անցնող գարուններուն անթառամ վարդը, իրաւամբ արժանի անոր գգուանքին, անոր քնքուչ համբոյրներուն: Ամէն ինչ մէկդի է ձգել հիմա. իր էն աղուոր օրերը ունի նա ու էն բաղձալին: Երեկուտն սիրտն է հիմա, նոր հրապոյր մը հագած ամբողջ իտէալ մ'է իրաւցնէ երազուած հեռանկարին: Աս ալ աղուոր կեանքը նեմարիս մարդուն: Օ՛հ, չպիտի ուզէիցուցնել անկէ անդին: Բայց իջնենք, հանդիպելու համար էն վերջինին որ թէեւ տխուր, բայց ամենէն հեշտինն է: Ան ալ հիանալի է, այդ կեանքն ալ աղուոր, ուր կը տեսնես ալեւոր ծերուկը, զոր իր պատկառանքէն առանց մաս մը իսկ կորսնցուցած ըլլալու, իր միակ երանելի մրաբը կ'առնէ հիմա, յաւիտենականին քարոզուած, խոստացուած ճամբուն մէջ, հեռու ժխորէն, հոգէն ու տառապանքէն, իրեններուն մաքուր արցունքներուն տակ ցողաթուրմ, իրեն սիրելիներուն օրհնէնքովը, խնկովը հոգեպարար նոր ճամբան ձեռք առած է, համբոյրներու տակ արբշիռ:

Նախկին մրաբը նոր քունին տեղի տը՛ուած է հիմա: Եւ երեւակայել չի՞տար սա՛, երեւցող ու անցնող մեծ նաւը, զոր իր հսկայ յառաջացումին տակ, փրփրուտ կոհակներ կը շինէ ու կը ձգէ, եւ իրաւ, թէեւ իր հանդարտ երեւոյթը վերստացած է եռացող ջուրը, սակայն անցեր ու գացեր է հըսկայ նաւը. իր համարը տալու հպարտ քաշուածքով մը, դէպի սպասուած նաւահանգիստը:


Հոս է ահա, ուր կը հանդիպիս, երեւակայուածէն ալ աւելի տխուր պատկերին, ուր գծող վրձինը, իր ամենէն նուրբ ձեւին տակ չէ՛ մոռցած նկարել, մէկ թափով, Արեւու մարդուող իրիկնամուտին մահաստուերը որ սառսուռ է համակ: Թաղուած չիրիմներու երկար շղթայ մը, անոր կուրցընող պատանքովը քողարկուած:

Եւ այսպէս ամէն օր, ամէն ժամանակ, ամէնուն համար:

Ինչ է կեանքը արդէն: Բայց, բարոյականի մարդուն պատիւը կայ հոն. ջանանք հասնիլ անոր:

ԳԱՏԸ-ԳԻԻԿ

ՌՕՄԱՆ Գ.



ՊԱՐՈՆՆԵՐ ՏՈՒՆԵՐ ՔՂԵՐ

Այս գիշեր, պարոն Տոտոն տարօրինակ երազ մը տեսաւ:

Պալոնով մը կը խաղար ու զայն շատ բարձր կը նետէր, այնչափ բարձր որ մէկէնիւմէկ պալոնը անհետ եղաւ: Պարոն Տոտոն (երազին մէջ) համբերող է: Բարի մը վրայ նստեցաւ զոր մաքրեց կանխապէս իր թաշկինակովը՝ չաղտոտելու համար իր նոր վարտիքը և սպասեց որ պալոնը ուզէ վերըստին իջնել: Հաշուելով, սանկ նանկ, մինչեւ հարիւր ու տեսնելով բանի մըն ալ չի գալը, որոշեց անմիջապէս ինք երթալ փրկողը ապերախտը, որովհետեւ շատ ժամանակ չունէր, եւ իր հայրը ու մայրը ժամը եօթին՝ պիտի ճաշէին և նախախնամական լեռ մը կը գտնուէր բարերաղդաբար հոն իբր սանդուխ ծառայելու համար Պարոն Տոտոն: Երկար ատեն մագլցելէն վերջը, հասաւ վերջապէս մեծ պատի մը առջեւ՝ փորուած փոքրիկ դռնակով մը, գլխագիր սա՝ վերտառութիւնով. «ԴՐԱՍՏ»:

«Ահա՛ ընելիքս, — ըսաւ ինքնիրեն Տոտոն, — զանգակը դարձեմ պիտի, թերեւս իմ պալոնս տեսան, ամէն պարտաւայի մէջ պիտի ուզէի այցելել այս տեղը որու վերայ ա՛յնքան շատ խօսուելը լսած եմ:»

Ու չալեց՝ քիչ մը զգածուած: Վայրկեանէ մը վերջը, դուռը բացուեցաւ կէս մը և երե-

ւալով Սուրբ Պետրոսի դէմքը:

— Ո՞վ էք դուք, ի՞նչ կ'ուզէք:

— Տոտոն եմ ու կուգամ պալոնիս համար:

— Տոտո՞ն մի, Ձե՛մ ճանչնար կոր: Տոմսակ ունի՞ք:

— Ինչ տոմսակ:


— Ձեր մուտքի տոմսակը, բարէ՛: Առանց անոր կը կարծէ՞ք որ մարդ կրնայ Դրախտ մտնել:

— Ձեմ գիտեր, — ըսաւ Տոտոր վշտահար:

— Եթէ տոմսակ չունիք, ան ատեն երթաք բարո՞վ:

Ու Սուրբ Պետրոս դուռը նորէն գոցելու վրայ էր երբ քաղցր ճայն մը ելաւ. «Հապա՛, սուրբ Պետրոս, թողէք որ ներս մտնէ ան... ինծի՛ հաճոյք պատճառելու համար, օ՛ն, սուրբ Պետրոս» — «Բայց, օրիորդ...» — «Ինծի՛ հաճոյք առթելու համար» — «Օ՛ն, պէտք է ընել միշտ ինչ որ դուք կ'ուզէք:»

Եւ դուռը բացուեցաւ ճամբայ տալու համար Պարոն Տոտոնին՝ որ ինքզինքը գրտաւ ներկայութեանը... գուշակեցէք թէ որի՞ն... իր փոքրիկ քրոնը Զէզէթին՝ զոր կորսնցուցած էր երկու տարիէ ի վեր և որ վերստին կը գտնէր զանեկա աւելի՛ սիրուն իր ճերմակ գեղեցիկ չըջաղգեստին մէջ սի-



րուն մանրիկ թեւերով: Դուք կը հասկնաք թէ ինչպէ՛ս իրար գրկեցին:

Ձեզէթ՝ խղզելով Տոտոռը հարցումներով թէ ինչպէ՛ս էին հայրիկն ու մայրիկը: Բարի Բլէմանթինը նորէն քաղցրաւենի կ'ուզէ՛ր: Ու Քորա շունը կը հաջէ՛ր ինչպէս երբեմն սպանդագործ տղաքներուն ետեւէն, եւ Լօ՛ւսը:

Եւ Դիէնէ՞թը: Ի՞նչ եղած էին: Տոտոռ կը պատասխանէր կրցածին չափ:

« Դուն իմ քովս պիտի մնաս, — ըսաւ Ձեզէթ, — պիտի տեսնես թէ մարդ որքա՛ն աղէկ է հոս, ու յետոյ աղուոր թւեր պիտի ունենաս կռնակդ, իմիներուս պէս: »

— Պիտի ուզէի, — մըմնջեց Պարոն Տոտոռ հրապուրուած, — բայց չեմ կրնար, հայրիկը ու մայրիկը ճաշի կ'սպասեն կոր ու մտատանջ պիտի ըլլան եթէ տուն չերթամ:

— Ի՛նչ կորուստ, բայց, գէթ, մեկնու-

մէք առաջ կ'ուզեմ քեզի՛, այցելել տալ՝ Դըրախտը: »

Ու բռնելով անոր ձեռքէն, առաջնորդեց երկինքին կապոյտ մարմանդներուն մէջտեղէն:

Անկիւնէ մը դարձած միջոցին, մէկէնի-մէկ ինքզինքնին Տիկին Մարիամի դէմը գտան որ ոսկիէ գահոյքի մը վրան նստած կը մանէր, մինչդեռ հրեշտակ մը անոր ոտքերուն տակ կը սահեցնէր ամպերու բարձիկ մը: Տիկին Մարիամ ժպտեցաւ Ձեզէթին ու Տոտոռի այտին վրայ ալ բարեկամական պզտիկ ապտակ մը տուաւ, ըսելով թէ յիշէ զինքն ալ ի՞նչ հօրը ու մօրը բարի յիշատակին մէջ, յետոյ անոնց խաղալու հըրաման տուաւ: Ո՛չ հեռու ատկէ Յիսուս Մանուկին հանդիպեցան որ կը ներհէր ստնտուին հսկուն աչքին տակ: Պարոն Տոտոռ ու Ձեզէթ անոր մօտէն անցան ոտքերնուն ծայրը կոխելով զայն չարթնցնելու համար:

« Հիմա, ըսաւ Տոտոռ, կ'ուզեմ տեսնել բարի Աստուածը: »

Գեղեցիկ տունի մը առջեւ կանգ առած էին որուն բակը լեցուն էր հրեշտակներով որոնք զբաղած ըլլալով երեւոյթը ունէին: Զէզէթ անոնցմէ մէկուն ուղղութեամբ ինչ հարցուց թէ բարի Աստուածը կրնայի՞ն տեսնել: « Երթամ նայիմ, ըսաւ հրեշտակը: » Անմիջապէս վերադարձաւ ան իրենց ըսելու թէ՛ նորին Յաւիտենականութիւնը անոնց կ'սպասէր: Պարոն Տոտոռ այնքան շփոթած էր որ չգիտնալով ափին մէջը խնջեց: Բարի Աստուածը զանոնք ընդունեց իր աշխատութեան հենակին մէջ՝ ուր ոտքերը կը տաքցնէր վառարանին դէմ լրագիր կարդալով:

« Բարի լոյս, Զէզէթ: Բարի լոյս ծերունկ Տոտոռս. մեզի հետ ժամանակ անցընելու համար եկար: »

— Ո՛հ, Յաւիտենական Հայր, տունէն ինծի կ'սպասեն կոր ճաշի համար: Պիտի փափաքէի միայն գիտնալ թէ ո՛ւր է պալոնս:

— Նա՛, տղա՛ս հոս է: Այժմ չե՞ս փափաքիր ուրիշ բանի:

— Օ՛հ, այո, Յաւիտենական Հայր քրայց չեմ համարձակիր կոր ըսելու:

— Առանց վախի ըսէ՛, պզտիկս:

— Ե՛՛ ուրեմն... տեղս պիտի... »

Այս վայրկեանին, պարոն Տոտոռ արթննացաւ ու կրցաւ ապշուածութեամբ տեսնել որ իր փափաքը ընդունուած էր:

Թարգմ. ՎԱՀՐԱՄ Յ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Ա. կարգի. Ա. Գեղը. Վրժ. ի Գալաթի

ԱՅՐԱՆԱՄ Օ. ՀԱՅՐԱԿԵԱՆ

Ա. Գ. Ի. Բ.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱՋԱՐԴ

ՏԱՐԱԿԱՆ Ա. Ե. Բ. ՏԱՐԻՆԵՐՈՒ

ՏՊԱԳՐ ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Գ Ի Ն 3 1/2 Ղ Ր Շ.

Դպրոցեռն համար մեծաբաւակ զեղջ

Կեդրոնացեղին Ե Մեծ Շուկան Սքաւ Օսալար ծանօթ փողագրիչ Գ. Խոսկանց Էֆեմիսի 26 բիւ սենեակը:

ՀԵՏԱԲՐՔԻՐ ԿԻՆԸ

Ազնուական մը օր մը որսի ելած էր, ճամբան կորսնցուց, երբ անդին ասդին ճամբայ մը կը փնտռէր, խօսելու ճայնոր մը լսեց հեռուէն եւ երբ մօտեցաւ դէպի այդ ճայնը՝ տեսաւ որ մարդ մը եւ կինը փայտ կը կտորէին. կինը կ'ըսէր.

— Պէտք է խոստովանիլ որ մեր նախաձայրը շատակերութիւն ըրած էր խնձորը ուտելով, եթէ ան հնազանդէր Աստուծոյ՝ հիմայ մենք ամէն օր ասանկ տաժանելի աշխատութիւն չը պիտի ունենայինք:

— Եթէ եւա, պատասխանեց մարդը, շատակեր էր, Ագամին ըրածն ալ յիմարութիւն էր իր կնոջ հնազանդելովը, եթէ ես անոր տեղը ըլլայի, եւ երբ այս խնձորները դուն ուտել ուզած ըլլայիր, ապա մը կը զարնէի եւ քեզի մօտիկ չէի ընել:

Ազնուականը անոնց մօտեցաւ և ըսաւ.

— Որչա՛փ կը տանջուիք, խեղճեր:

— Այո՛, տէ՛ր, պատասխանեցին երկուքն ալ, առտուընէ մինչեւ իրիկուն ձիերու պէս կ'աշխատինք և տակաւին ապրուելու համար դժուարութիւններ կը քաշենք:

— Ինծի հետ եկէք, ըսաւ այն ատեն ազնուականը, ես ձեզի ապրեցնեմ առանց աշխատութեան:

Այս պահուն ազնուականին հետեորդները՝ որոնք զինքը կը փնտռէին, եկան գտան. երբ ամուսինները այս բանը տեսան զարմացան եւ ուրախացան: Երբ ազնուականին ապարանքը մտան, աղուոր աղուոր հագուեցան, կառքեր ունեցան և ամէն օր իրենց սեղանին վրայ 12 պնակներ դրուած էին: Ասանկով երբ ամիս մը անցաւ, պընակները կրկնապատկուեցան: Բայց սեղանին մէջտեղ վրան գոց ուրիշ պնակ մ'ալ դրուած էր: Նախ կինը՝ որ հետաքրքիր էր, ինչպէս ամէն կինը սովորաբար, ուզեց բանալ պնակը և մէջինը հասկնալ. ծառայ մը որ հոն ներկայ էր, արգիլեց իրեն մօտենալ այդ պնակին, վասն զի ազնուականը այնպէս հրամայած էր և չէր ուզեր որ տեսնէին պնակին մէջինը:

Երբ ծառայները դուրս եկան, մարդը տեսաւ որ կինը բան չէր ուտեր, և թէ միանգամայն տխուր էր. հարցուց կնոջը

թէ ի՞նչ ունէր :

— Սեղանի վրայ գտնուած բոլոր աղէկ կերակուրները, ըսաւ կինը, ղեւեղ հոգս չէ, կ'ուզեմ հասկնալ թէ ձեզ գոց պնակին մէջինը ի՞նչ է :

— Խեղճ ես, ըսաւ ամուսինը քչըսի՞ն որ ազնուականը արգելած է :

— Ազնուականը անիրաւ է, յարեց կինը, եթէ չէ՞ ղեւեղ որ պնակին մէջինը տեսնէինք, ինչո՞ւ սեղանին վրայ դնել տուաւ : Եւ սկսաւ լալ ու ըսաւ թէ՛ եթէ ամուսինը պնակը չբանայ, ինքզինքը պիտի ըմպաննէր :

Երբ ամուսինը տեսաւ թէ կինը կուլայ, մեղքացաւ եւ որովհետեւ չատ կը սիրէր զայն, ըսաւ թէ ուզածը պիտի ընեն իրենց աւանդական համար : Եւ այն ատեն բացաւ պնակը՝ ուրկէ դուրս ցատկեց պղծտիկ մուկ մը, ետեւէն վազեցին որ թռնեն, բայց ան պղծտիկ ծակ մը մտաւ : Ազնուականը իսկոյն ներս մտաւ և հարցուց թէ՛ ո՞ւր է մուկը :

— Տէ՛ր, ըսաւ ամուսինը, կինս ստիպեց զիս պնակին մէջինը տեսնելու համար, ես բացի, սակայն չուզելով բացի եւ մուկը դուրս ցատկեց :

— Ա՛հ, ըսաւ Ազնուականը, դուք կ'ըսէիք թէ՛ եթէ ես Ադամին տեղը ըլլայի, ապտակ մը կը զարնէի Եւայի երեսին եւ կը հասկցունէի անոր շատակեր եւ հետաքրքրել ըսելու, պէտք էր որ խոստումը պահէիք եւ դուք, չար կնիկ, ամէն լաւ բաները ունէիք եւ այս բաւական չէր, ուզեցիր իմ արգելած պնակէս ուտել : Գացէ՛ք, ո՞վ խեղճեր, նորէն անտառ գացէ՛ք աշխատելու եւ մի խօսիք մեր նախածնողաց չարութեան վրայ, քանի որ դուք ալ ըրիք նմաներինակ չարութիւն մը՝ որով կ'ամբաստանուիք :

Թարգմ.


Յ. Զ. Վ.

ՌՊՎ ՉԻ ԿԱՐԴԱՐ

ՔԱՍԻՄԻ ԹԱՐԳՄԱՆԱԾ

Աշխարհաբար ՆԱՐԵԿԸ

Կը հրատարակուի Մանգումի Էֆեսուս օրաթերթին մէջ՝ Սեպտ. 11էն սկսեալ (թիւ 431) : Ուրբաթ օր, իբր թերթօն :



ԾԾԾԾԾԾԾԾԾԾԾ

Դալար ամիսք երբ որ ծաղկին,

Սեւ ծիծառն արագաթեւ

Մեր տոբներուն գայ եղիփին

Դրնել բոյնը, կըսին վերել :

Եւ առաջին ցուրտներուն ան

Թեւերն անխոց, մեծ լայն բացել,

Կը սուրայ յար, դեպ օրեւան

Դեպ եզիպսոս, քափուկ դաբեր :

Ու մեծ ցերեպ, աչքով սրտում,


Եւր քափառիկ այս փախուսից,

Կը քանգուի սիրսն անդադրում,

Փափափով՝ Տիեզերքին :

ԱՆՏՈՒՆ ԹԵՕՏԻՔԷ

Թարգմ. Պ. Բ. Բ.



ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԲՈՒՆԻ

ԹԻՂՈՒՆԻ

Շար. Գախորդ քիւից :

Երկինքին մէջ, վայրի ծիծառները ու ծիծեռնակները կը ցուցնեն իրենց տաքութեան ու արտակարգ արուեստները՝ Նետերու պէս արագ ճամբայ կ'առնեն, փիղբերնին կ'երկարեն սուր ու կատաղի աղաղակներով, սիւքին տակ խոնարհած առաքաստներու պէս կը խոնարհին ու օձապտոյտ կը թռչին խենթի պէս :

Միջոցի մեծ մաքրիչ, իր թռչելուն մէկ քանի ժամուան մէջ, ծիծեռնակը կը մաքրէ օդը հարիւրաւոր ճանճերէ ու մօղուկներէ : Մենք անոր կը պարտինք ճահճային տենդերէն, դեղին տենդէն ազատ մնալնիս, զոր մօղուկները կը բերեն իրենց ծոցով հեռաւոր երկիրներէ : Իր ախորժակն ալ երաշտահաւինին չափ կ'արժէ, Բնապատում մը կը պատմէ թէ մէկ օրուան մէջ տասը վայրի ծիծառներ սպաննուեցան այն պահուն՝ երբ բոյն կը մանէին տալու համար վերջին կտուց մը, ջամբը իրենց պղտիկներուն Բնոցն անտառը բացին, հոն գտան մնացորդները 5432 միջատներու, այսինքն թռչուն գլխի 543 միջատ ջնջած... :

* * *

Արթուրագալտականներ մեր հունձքերուն, մէկ քանի թռչուններ ընկերներն են նաեւ մեր արջառներուն։ Ո՛չ մէկ եզերու հօտաբաժելու ատեն առանց տարմահաւերու կամ որիներու կը մնան, կը խայթեն ու կը ջլատեն զանոնք միջատները։ Վստահ կամ անվեհեր, տուարծիկները կուգան կը նստին կովին եղջիւրներուն վրան ու կը հետեւին հօտաղին որ կը տանի իր ոչխարները։ Անծեղը խոզերուն կռնակը կ'ելլէ ու կը ժողվէ գառնուկներու բուրդին մէջէն։ Անիկա շատ փափկակեր է իրենց գարշաճիւներէն։ Նա, բըրուկաւոր արառոյտի մը պէս մեծ, հօտին վերարոյժը, եզնավարը։ Անունը կ'ըսէ պաշտօնը։ Իր ամէնէն մեծ հաճոյքը թրթուր մըն է որ հաւկիթ կ'ածէ ելերու վերնամաշկին տակ ու հոն կ'ապրի մինչեւ իր կերպարանափոխութիւնը։ Սաստիկ ու ճարպիկ պզտիկ հարուածով մը, կը կտրէ մաշկը ու կուտէ հացկատակը։

Ինչպէս դաշտը, ինչպէս պուրակը, ինչպէս մրգաստանը՝ նոյնպէս անտառն ալ իր ճարտար ու բարերար հիւրերը ունի։ Երբոր փայտահատը դադար կ'առնէ և բարձր ծառաբերձ անտառները չեն թնդար ա՛լ տապարի հարուածներով, չոր ու եղնկան պզտիկ աղմուկ մը կը լսուի ծառերու կոճղէն։ Փայտփորն է որ կ'աշխատի մոլեգնութիւնով մը, համբերութիւնով մը որ ոչինչ զայն կը թողնէ։ Իրենց համար հանգիստ չի կայ։ Գիշերը կ'անցնէ, եթէ պէտք է, ա՛յն դիրքին մէջ որ ցորեկ ատեն ունի, անդադար վրան իյնալու, ճիւղի մը վրան հաստատուած ճանկերուն միջոցով։ Պիւֆոն անհանգիստ ու դաժան դիմագծութիւն մը կը գտնէր։ Ինչպէս, աղկիոնը որ ծակ փորով, ժամերով կ'սպասէ ջուրին եզերքը՝ սպիտակի մը երկբայական անցքին։

Մենք չենք պակասած տեսնալէ փայտփորին մէջ թշնամի մը և անտեսումը փոխարէն անոր գլուխը գին կը դնէ։ Բայց, չիտակը, կը կարծենք թէ այդչա՛փ անմտօրէն յարձակելու է ուժեղ կոճղերուն վրայ։ Իմաստութեամբ փորձուած ծառը, փայտփորը իրեն կ'առնէ, հոն կը հաստատուի. այս փայտը ծակուած է, բազմամարդ է ուրեմն։ Միջատներուն տոհմ մը կը բնակի հոն։ Փայտփորը կ'սկսի կտուցով խաղալ։ Պարզամիտ ականատես մը ծաղրած է զայն։ «Տեսէ՛ք

անխելքը, քանի մը հարուածներէ վերջը, ծառին միւս կողմը կը վազէ տեսնալու համար թէ իր կտուցը մէջտեղէն անցած է»։ Ինչ որ դարանկալ կ'սպասէ, միջատներուն մեկնումին է. անոնց ճամբուն վրայ կ'սպասէ ու կը գոցէ պզտիկ օձի մը պէս դուրս երկընցած լեզուն ճամբուն վրայ ուրկէ պիտի անցնի ցեղը։ Երբ զայն մըջիւններով և լուծներով համակուած կ'զգայ, ետ կը քաշէ ու ձիւ լափէ իր որսը։ Առանց անոր՝ անտառները չպիտի ունենային ո՛չ մէկ բարտի։ Փայտփորը մեր անտառներուն պահապանը տիտղոսին արժանի է։

Աւելի՛ պզտիկ, այլ աւելի աշխատասէր, ծառագնացները և ճշնարօրները կը նմանին փայտփորներուն ու կանանչ փայտփորներուն։ «Ասոնք,— կ'ըսէ Անտուէ Թէօփէ,— սքանչելի մարզուսոյցներ, վարպետ թրթաբաղոցներ են, որոնք պէտք էին պատուրուիլ ամէն անոնցմէ որոնք անտառագործութեան կուտան խելքերնին։ Ծառ մը կ'այցելեն ճիւղէ ճիւղ, ապրելով շուրջ տերեւախիտ ցօղուններու, վերադառնալով ամէն տերեւի, զայն քննելով, գլուխին ծռած, ամէն երեւակայելի դիրքերու մէջ»։ Մենք ենք որ կը քաղենք վերջնականապէս պտուղները այս հանճարիմաց և անդու աշխատութեան։

Մոռին մէջ չմոռ դանակ. — Պահպանող ու հրսկող զիշերի. — Մարդկային ապերախտութիւն. — Անսահման եւ անմեղադրելի ջարդ. — Անդորրութիւն մեր այերային պաշտպաններուն։

Օրը կը վերջանայ։ Ցախաստանին աքաբաղանները եղեւինին ամէնէն բարձր ճիւղին վրայ ելած է իր հրաժեշտը երգելու համար արեւուն վերջին ճառագայթին։ Թռչունները բոյն մտած կը լռեն։ Մութը կ'երկընայ դաշտերուն մէջ և պարտէզները կը նիւհեն։ Լոյսերը կը վառուին տուններու մէջ։ Իրիկուն է։ Կարծես թէ բնութիւնը մեռած է ու կեանքը դադրած է ա՛լ։ Կեանքը չը դադրիր բնա՛ւ։ Գիշերուան էակները կուգան տեղը բռնել ցորեկուններուն։ Մարդ իր շուրջը խառնաշփոթ բզզումով կ'զգայ, կը գուշակէ սոսկալի կրկուք մը որ կը ծնի։ Ճճին դուրս կ'ելլէ ծակէն ուր ցորեկուն տաքութիւնը զայն բանտարկած էր ու կը ծողայ տերեւներուն երկայնքը։ Միջատը

կ'աշխատի շառաչելով ու կ'աւերէ: Մեծ ու փոքրիկ մուկեր կը վազվաւառն արագ ու զրաղած: Շիկամուկերը և խլուրդները կը շարժին իրենց գետնուղիներուն մէջ: Ասիկա մեր գիշերային թշնամիներուն սպառնացող բանակն է որ կ'սկսի քաշել:

Բայց մեր գիշերային պահապան թռչունները հոն են: «Յանկարծական թռիչքներ կը լեցնեն ճիւղերը, կը գրէ թէոֆիլ կօթիէ: Փոսփորափայլ աչքեր կը բացուին լուսաւոր ծակերու պէս՝ գիշերուան սեւ դիմակին մէջ: Տարօրինակ ողբեր, շարաշուք կոծեր կը պուժկան, կ'երկարին ու կը մարին, աւելի խորութեան մասնելով զարհուրած բնութիւնը: Բուերու, բուէճներու, գիշերահաւերու, կասկամներու և անտառանակ բուերու աշխարհը կ'արթննայ, կուգան մեզ պաշտպանել գիշերային միւս խումբին, մեր դաշտերը կ'լլող անկուշտ կրծողներուն դէմ: Արօթէն փորուած ակօսին երկայնքը, չիկամուկը իր ճամբան կը փորէ, ցորենի հատիկները հողէն դուրս կը հանէ, պաղատու ծառերու սերմնոցին մէջ նսնոցմէ հատ մը իսկ չի ձգեր, նոր՝ թաղուած, խոզկաղինները կը տանի ու կը թալլէ դեռատի ծառատունկերը: Ի՞նչ պիտի ընէր գեղջուկը առանց բուերու և բուէճներու օգնութեան: Երբ ցորենները հասունցած են, դաշտամուկերը կը հասնին, կը կտրեն ցողունը և կ'ուտեն հասկը: Հունձքին ատեն, փոքր ու մեծ մուկերու հետ ընկերացած կուգան աղուոր մը ուտել մեր որայամբարին մէջ: Բարի իւլօթը կը հետապնդէ զայն ու իր մեծ աչքը բացած կը նայի մեր ցորեններու պարէնին վրայ:

Տարւոյն գիշերը կը հասնի. ձմեռը կը մօտենայ, եկեղանիկները չեն թոփր այլ եւս թաւուտին մէջ էգ վշտահաւերու և երաշտահաւերու հետ, սոխակները կ'երգեն Պարսկաստանի ու Հնդկաստանի վարդերուն մէջէն, ծիծեռնակները պիտի մեկնին, մեկնա՛ծ են:

Միջատները անշուշտ՝ լաւ բաժին մը պիտի ունենան: Թրթուրներն ու հարսանեակները յաջորդ գարնան համար կործանիչ նոր բանակներով կը պատրաստուին... Մտիկ ըրէք կեռնիին սուլումը: Միւս թռչուններու երգակցութիւնը կը մոռցնէ մեզի: Ի՛ր մի-

ջատին դէմ մղած կռիւէն չէ կեցած: Արեւու առաջին ճառագայթին որ կը հետեւի շնձրեւին, ջրակնյաբու քով կը կենայ, տերեւներուն կը դառնայ, ու անոնցմէ հատ մը չի ձգեր առանց մանրակրիտ քննութեան: Եւ տեսէք արքայիկին ցատկրտելը դուռներու սեմին քով ու պատուհաններու եզերքը: Երբ միւսները ցուրտէն ու ցողերամէն փախած են, անոնք հոն են, հաւատարիմ իրենց թրթուր քաղելու աշխատութեան: Եղեւիններուն մէջ, գիհիններու և թեղօշներու կանանչ ասեղներուն տակ, տարին երեք միլիոն հարսնեակներ կը ջնջն:

Թարգ. ՎԱՀՐԱՄ Յ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ



ՈՍԿԾ ԲԶԳԶԸ

(Շարունակութիւն 33րդ քիւնն)

Տասներկու քայլ հազիւ առած էինք, երբ Լըկրէնտ ահարկու յիշոց մը արձակելով ցատկեց ժիւրիդէրի վրայ եւ բռնեց անոր օձիքէն: Խափշիկը զարմացած՝ աչքերը խոշոր խոշոր բացաւ եւ բերանաբաց թողուց բահերը եւ ծունկի վրայ ինկաւ:

— Ոճրագործ, ըսաւ Լըկրէնտ, վանկերը հնչելով իր սեղմուած ակռաններուն մէջ, դժոխային ստահա՛կ, չիտիէ չիտակ յայտնէ միտքդ: Ո՞րն է ձախ աչքդ:

— Ա՛հ, մասսա Ուիլլիմ, ձախ աչքս ասիկա չէ՞, մռնչեց ժիւրիդէր սոսկումով, իր ձեռքը աջ աչքին վրայ դնելով:

— Կը կասկածէ՛ր, վստա՛հ էի, հուրրա՛, աղաղակեց Լըկրէնտ, թող տալով խափշիկը եւ շատ մը ցատուտուկներ ու ոտընդպարներ ընելով, ի մեծ վախ իր ծառային:

— Երթա՛նք, պէտք է ետ դառնալ, ըսաւ անիկա, խաղը չէ կորսուած:

Եւ անիկա մեզ նորէն կակաչենիին քով տարաւ:

— Ժիւրիդէ՛ր, ըսաւ, երբ ծագին ստորոտը հասանք, հո՛ս եկուր, Գանկը՝ երեսը դուրս դարձուած գամուած է ճիւղին, կամ ճիւղին սոսինձով փակցուած:

— Դո՛ւրսն է երեսը, Մասսա՛, ասոր համար ագռաւները կրնալ ուտել աչքերը առանց յոգնութեան:

— Լա՛ւ, այն ատեն այս աչքէ՞ն թէ այդ աչքէն իջեցուցիր բզէզը:

Եւ Լըկրէնտ իրարու ետեւէ ժիւթիդէրի երկու աչքերէն բռնեց:

— Այս աչքէն, Մասսա՛. ձախ աչքը, ճիշդ ինչպէս ինծի ըսած էիք:

Եւ նոյնպէս անգամ մըն ալ իր աջ աչքըն էր որ կը ցուցնէր ան:

— Ասիկա կը բաւէ, պիտի սկսինք:

Այն ատեն բարեկամս, այն յիմարութեան մէջ՝ ուր հիմա կը տեսնէի կամ կ'երեւակայէի տեսնել մէթոտի նշաններ մը, բերաւ այն ցիցը՝ որ կը ցուցնէր բզէզին ինկած տեղը, իր առաջին տեղէն երեք ըթմատ դէպի արեւմուտք: Յետոյ, առաջուան պէս, իր ժապաւէնը ցողունին ամէնէն մօտ կ'իտէն բերելով մինչեւ ցիցը և շարունակելով զանի երկնցնել ուղիղ գծով յիսուն ոտք հեռաւորութեամբ նշանակից նոր կէտ մը, շատ մը մէթր հեռու այն տեղէն՝ ուր առաջ փորած էինք: Այս նոր առանցքին չուրջ առջինէն քիչ մը աւելի մեծ շրջանակ մը գծեց ան եւ սկսանք նորէն փորել: Սոսկալի կերպով յագնած էի. բայց ա՛յ իմ վրայ տրուած աշխատութեան համար մեծ խորշում մը չէի գգար. առանց ճշդիւ հասկնալու ի՞նչ բան որ կը պատճառէր այս փոփոխութիւնը՝ իմ մտածումներուս մէջ, Բոլորովին անբացատրելի եղանակով մը կը շահագորգողէի աւելի պէտք է ըսէի ինքզինքս զրգուռած կ'ըզգայի: Կարելի է Լըկրէնտի անհետեւ ընթացքին մէջ չեմ գիտեր ի՞նչ համարձակ կերպարան մը, կախարդական կացութիւն մը կար որ նոյն իսկ վրաս կ'ազդէր: Եռանգով կը փորէի եւ ժամանակ ժամանակ յանկարծ կը կենայի աչքերովս փնտռելով—այսպէս ըսելու համար—զգացումով մը՝ որ սպառուսի կը նմանի. այս երեւակայական գանձը՝ որուն ցնորքը կորսնցուցած էր անբաղդ բարեկամիս գլուխը: Այս վայրկեաններէն մէկուն մէջ՝ ուր այս ցնորումները ամբողջ միտքս կը գրաւէին, եւ որովհետեւ արդէն մէկ ու կէս ժամէ ի վեր աշխատած էինք, նորէն ընդմիջուեցանք չունին սաստիկ հըռնդիւններով, իր անհանդարտութիւնը առաջին վայրկեանին մէջ յայտնաբար միայն զուարթութեան կամ քմահաճոյքի արդիւնք էր, բայց այս անգամ աւելի ծանր

ըլլալու հանգամանքը կ'առնէր: Որովհետեւ ժիւթիդէր կը ջանար անոր կողորդէն նորէն կապել, սոսկալի դիմադրութիւն մը ըրաւ եւ մէկ եղերքէն փոսին մէջ ցատկելով փորեց հողը իր ճանկերով՝ մոլեգնաբար: Քանի մը երկվայրկեանի մէջ ան գըտած էր մարդկային ոսկորներու զանգուած մը, որ երկու կատարեալ կմախքներ կը կազմէին եւ խառնուած էին շատ մը մետաղի կտորներու հետ որոնց հետ կար բան մը՝ ուր մեզի փտած բուրդի փոշի թուեցաւ. Բա՛հի մէկ կա՛մ երկու հարուածներ դուրս նետեցին Սպանիական մեծ դանակի մը երկաթը. փորեցինք տակաւին. և երեք կամ չորս ոսկիէ ու արծաթէ դրամի կտորներ երեւցան ցրուած:

Ասիկա տեսնելով ժիւթիդէր հազիւ կըրցաւ զսպել իր ուրախութիւնը. բայց իր տիրոջ դիմագծութիւնը վերջին աստիճան յուսախաբութիւն կը ցուցնէր: Սակայն անիկա մեզի աղաչեց աւելցնել մեր ջանքերը և հազիւ լիմցուցած էր խօսիլը, երբ սահեցայ եւ առաջ ինկայ. կոշիկիս ծայրը բռնուած էր խոշոր երկաթէ օղակի մը մէջ՝ որ պառկած էր կիսովին թաղուած կակուղ հողին մէջ:

Այս անգամ լըջօրէն սկսանք աշխատութեան և երեք անցուցած չէի տասը վայրկեան այնպիսի սաստիկ գրգռութեան մը մէջ, ինչպէս այդ ատեն:

Այս միջոցին կատարելապէս հողէն դուրս հանեցինք փայտէ երկայն սնտուկ մը՝ որու կատարեալ պահպանութենէն և զարմանալի կարծրութենէն դատելով, պէտք էր ենթադրուած ըլլալ հանքաւորման եղանակի, թերեւս պիթիօրիւր քր-մերֆլուրի: Այս սնտուկը երկուքուկէս ոտք երկայնութիւն, երեք ոտք լայնութիւն և երկուքուկէս ոտք խորութիւն ունէր: Անիկա ամուր կերպով շրջապատուած էր գամուած երկաթէ գօտիներով, որոնք տեսակ մը վանդակ կը կազմէին: Սնտուկին կողերուն վրայ, կափարիչին մօտ կային վեց հատ օղակներ, որոնց միջոցով վեց մարդ զանի գրաւել: Մեր բոլոր ջանքերը միացնելով հազիւ կրցանք զանի իր տեղէն շարժել: Տեսանք որ անհնարին է այնչափ ահագին բեռ մը փոխադրելը: Բարեբաղդաբար կափարիչը միայն ապահովութեան երկու նիգերը գոց-

ուած էր, զորս հանեցինք զողորմուն և անձկանօք: Մէկ վայրկեանի մէջ, անհաշուելի արժէք ունեցող գանձ մը պարզուեցաւ մեր առջեւ բոլորովին չողջողուն: Լապտերներու լոյսերը իյնալով փոսին մէջ, ոսկիներու և գոհարներու խառն կոյտէ մը կը ցայտեցնէին փայլ մը՝ որ կը չլացնէին և կը կորցնէին մեզ:

Զպիտի փորձեմ գրի առնել այն զգացումները՝ որոնցմով կը դիտէի այս գանձը: Ինչպէս կը հասկցուի, ապշութիւնը կը տիրէր ամէնուս վրայ: Լըկրէնտ այնպէս կ'երեւար թէ նոյն իսկ գրգռման ենթակայ եղած էր, և միայն քանի մը բառեր կ'արտասանէր: Իսկ Ժիւրիդէրի դէմքը ծածկուեցաւ մահացու դեղնութիւնով մը, որչափ որ խափշիկ մը կրնայ դեղնիլ: Ապշած և կայծակնահար կը թռէր: Իսկոյն ծունկի ինկաւ փոսին մէջ, իր մերկ ձեռքերը մինչև արմուկը խոթելով ոսկիին մէջ, զանոնք հոն թողուց իբր թէ կը խաղար հեշտանքով: Վերջապէս խորին հառաչանքով մը պօռաց, իբր թէ ինքնիրեն խօսէր:

— Եւ այս ամէնը գալ ոսկի փսէզէն՝ սիրուն ոսկի փսէզէն: Խեղճ պտրտիկ ոսկի փսէզը՝ զոր ես զրպարտել այս վայրենութիւնով: Չե՞ս ամէնար, աւագակ, դուն ո՛չ պատապաններ հիմա: անշա՛հ խափշիկ:

Սակայն վերջապէս պէտք եղաւ որ տրթընցնեմ — այսպէս ըսելու համար — տէրը ու ծառան, և իրենց հասկցնեմ թէ ստիպողական էր կրել այս գանձը: Ժամանակը ուշ էր և պէտք պիտի ըլլար աճապարել, եթէ ցերեկէն առաջ ուզէինք տուն մտնել: Ընելիքնիս որոշել դժուար էր, և խորհրդդակցելով չա՛տ ժամանակ կորսնցողցինք, մեր գաղափարները այնչա՛փ անկարգ էին: Վերջապէս պարունակութեան երկու երրորդը վերցնելով թեթեւցողցինք սնտուկը, ինչ որ թոյլ տուաւ մեզի զանիկա վերցնելու և իրձակէն հանելու, բայց ո՛չ առանց յոգնութեան: Անկէ հանած խռարկանիս տեղաւորեցինք ցախաստանի մը ձեւ և յանձնեցինք պահպանութեանը շուին՝ որու ժիւթիդէր խտիւ պատուիրեց տեղէն չշարժիլ ո՛ր և է պատճառով եւ նոյն իսկ բերանը չբանալ մեր վերադարձէն առաջ: Այն ատեն իսկոյն ճամբայ ինկանք սնտուկով մէկտեղ: Հիւղակը հասանք անջնաւ,

բայց յոգնութենէն ընկճուած և առաւօտեան ժամը մէկին:

Որովհետեւ շատ ուժասպառ եղած էինք, անմիջապէս չէինք կրնար գործի ըսկըսիլ: Մինչեւ ժամը երկուքը հանգչեցանք, յետոյ ճաշեցինք և նորէն մեկնեցանք լեռները, հետերնիս առած երեք խոշոր պարկեր զոր հիւղին մէջ գտնելու բաղդը ունեցանք: Ժամը չորսէն քիչ մը առաջ փոսը հասանք. կարելի եղածին չափ հաւասարապէս բաժնեցինք աւարին մնացորդը և առանց փոսը լեցնելու, սկսանք քալել դէպի մեր բնակարանը՝ ուր երկրորդ անգամ ըլլալով մեր ոսկիի բեռը ղրինք ճի՛շդ այն ատեն՝ երբ արշալոյսի առաջին շողերը կ'երեւային արեւելքի ծառերուն վրայի կողմէն:

Բացարձակապէս յոգնած էինք, բայց մեր յուզումը ա՛յն աստիճանի էր որ այս վայրկեանին չկրցանք հանգիստ առնել: Երեք կամ չորս ժամու անհանգիստ քունէ մը ետք ելանք, իբր թէ առաջուրնէ խօսած ըլլայինք, մեր գանձին քննութեան սկսելու համար:

Մնտուկը մինչեւ եզերքը լեցուած էր և ամբողջ օրը ու յաջորդ գիշերուան մեծ մասը անցուցինք իր պարունակութիւնը հաճելալու համար: Ո՛չ կարգ, ո՛չ դասաւորութիւն դրած էին: Ամենն ալ խառնիխառն դրուած էր: Խնամքով զատելէ ետք, ինքըզինքնիս տէր գտանք հարստութեան մը՝ որ առաջուրնէ մեր ենթադրածէն չա՛տ աւելի խոշոր էր: Ստակ ըլլալով հոն կար չորս հարիւր յիսուն հազար տոլար, իւրաքանչիւր կտորին գինը՝ կարելի եղածին չափ ճշգորէն ժամանակին բաղդատական ցուցակին վրայ հաշուելով: Արծաթի կտոր մը իսկ չկար: Ամէնն ալ հին ժամանակի և զանազան տեսակ ոսկիներ էին: Ֆրանսական, Սպանիական, Գերմանական գրամներ անգլիական սակաւաթիւ կիներէնքուեւ դըրամանիչներու (jetons) հետ՝ որոնց ո՛չ մէկ օրինակը տեսած էինք: Շատ մը խոշոր եւ ծանր դրամներ կային, բայց այնչա՛փ գործածուած որ՝ անկարելի էր մեզի անոնց փրերը կարգալ: Ո՛չ մէկ Սմերիկեան դրամ կար: Գոհարներու արժէքը մեզի քիչ մը աւելի հրապոյր տուաւ: Գտանք ազամանդներ՝ որոնց մէկ քանիները խիստ գե-

ղեցիկ և շա՛տ խոշոր էին . ընդամենը հար-
իւր տասը հատ , և որոնց եւ ո՛չ մէկը փո-
քոր է . տասը ութը հիանալի փայլուն
սուտակ . երեք հարիւր տասը զմրուխտ ,
ամէնն ալ ամենագեղեցիկ . քսանը մէկ շա-
փիղայ և մէկ արեւակն (opale) : Այս բոլոր
քարերը հանուած էին իրենց կազմածնե-
րէն և խառնիխուռն նետուած՝ անուակին
մէջ : Գալով կազմածներուն . մէկդի դրինք
զանոնք . այնպէս կը թուէր թէ մուրճի
հարուածներով ջախջախած էին , իբր թէ
ուզէին զանոնք անճանաչելի ընել : Այս ա-
մէնէն զատ կային ձոյլ ոսկիէ զարդարանք
ներ . գրեթէ երկու հարիւր մատանի և օղ ,
երեսունի չափ գեղեցիկ չղթաներ , եթէ
լաւ կը յիշեմ , ութսուն երեք խաչելու-
թիւն՝ խիստ մեծ եւ ծանր . ջերմօղիի ոս-
կիէ սկահակ մը՝ զարդարուած որթատունկի
տերեւներով և քրմուհիի պերճօրէն քան-
դակուած պատկերներով . հրաշալի կերպով
բանուած երկու հատ սուրի դաստապան , և
կարգ մը ուրիշ պզտիկ բաներ՝ զորս չեմ
յիշեր : Այս բոլոր թանկագին առարկանե-
րուն ծանրութիւնը 350 լիտրը կ'անցնէր
եւ այս հաշուին մէջ զանց ըրած եմ հարիւր
իննըսունը եօթը չքեղ ոսկիէ ժամացոյցներ
որոնց Կրեք հատին իւրաքանչիւրը կ'ար-
ժէր 500 տօլար : Շատերը աւելի հին էին .
անարժէք՝ իբր ժամագործութեան կտոր մը ,
չարժիչ մեքենաները՝ հողին մաշիչ ազդե-
ցութենէն քիչ ու շատ փաստուած ըլլալուն
համար , բայց ամէնն ալ զարդարուած էին
չքեղ քարերով եւ տուփերը մեծարժէք էին :
Այս գիշեր այնպէս հաշուեցինք որ անու-
կին պարունակութեան ընդհ . արժէքը կը
հասնէր մէկ ու կէս միլիոն տօլարի . և երբ
ետքէն գոհարները ու քարերը ծախեցինք ,
մէկ քանիները մեր անձնական գործածու-
թեանց համար պահելով , տեսանք որ մեր
կտրած գինը՝ իրական արժէքէն շատ վար
էր :

Երրորդ վերջապէս մեր քննութիւնը լը-
մընցուցինք և մեր վայրկեանական յուզումը
մեծ մասով հանդարտեցաւ , Լըկրէնտ , տես-
նելով որ այս հրաշալի հանելուկին լուծումը
իմանալու անհամբերութենէս կը մեռնէի ,
սկսաւ պատմել այն ամէն մանրամասնու-
թիւնները՝ որ անոր կը վերաբերէին :

— Կը յիշէք անշուշտ , ըսաւ , այն ի-

րիկունը՝ ուր ձեզի տուի իմ շինած կոշտ
ուրուագիրս՝ որ բզէզը կը ցուցնէր . կը յի-
շէք նաեւ թէ յանկարծակի եկայ , տեսնեա
լով որ կը պնդէիք թէ իմ գծածս կը նմա-
նէր մեռելի գլուխի մը : Առաջին անգամ որ
այս վճիռը արձակեցիք , կարծեցի որ կը
կատակաբանէք . բայց իսկոյն յիշեցի միակ
բիծերը՝ միջատին կռնակին վրայ եւ մը-
տածեցի որ ձեր գիտողութիւնը հիմ մը ու-
նէր : Սակայն ձեր ծաղրը՝ ի մասին իմ
պատկերագրական ծանօթութիւններուս ,
սիրտս կը նեղէր — որովհետեւ լաւ ար-
ուեստագէտ մը կը ճանչցուիմ ես — , ուստի
երբ ինծի տուիր մագաղաթի կտորը , նախ
ուզեցի զանկա ճմլել և կրակը նետել :

— Թուղթի կտորին վրայ խօսիլ կ'ու-
զէք , ըսի :

— Ո՛չ . անկա թուղթի կը նմանէր , եւ
ես ալ առաջին անգամ ենթադրեցի թէ
այդպէս էր , բայց երբ ուզեցի վրան գը-
ծագրել , իսկոյն հասկցայ որ անկա խիստ
նուրբ մագաղաթի կտոր մըն էր : Կը յի-
շէք որ ան շա՛տ ազտոտ էր , է՛հ . լաւ .
զանկա պիտի ճմլեցի երբ աչքերս ինկան
պատկերին վրայ՝ զոր դիտած էիք . և կոր-
նաք հասկնալ թէ ի՛նչ եղաւ զարմացումս ,
երբ իրապէս նշմարեցի մեռելի գլուխի մը
պատկերը ճի՛շդ այնտեղ՝ ուր բզէզ մը գը-
ծած էի : Վայրկեան մը շլացած կեցայ ,
բանավարութիւնս գտնելու համար : Դիտէի
որ իմ ուրուագիրս իր ամէն մանրամասնու-
թիւններովը կը տարբերէր աչքիս առջեւ
ունեցածէս . թէեւ երկուքին շրջագծին
մէջտեղ նմանութիւն մը կար : Այն ատեն
առի աշտանակ մը . եւ գացի նստեցայ սեն-
եակին միւս անկիւնը , ուր մագաղաթը հե-
տադօտիչ և աւելի ուշադիր քննութենէ մը
անցուցի : Զանկա դարձնելով միւս կողմին
վրայ . իմ ուրուագիրս տեսայ , ճի՛շդ այն-
պէս՝ ինչպէս որ շինած էի : Առաջին անգամ
զարմացայ՝ տեսնելով շրջագիծերու յայտնի
նմանութիւնը : Եզական դիպակցութիւն
մըն էր որ , առանց իմ գիտնալուս , մագա-
ղաթին միւս կողմին վրայ գանկ մը կը
գտնուէր , բզէզի ուրուագիրս ճի՛շդ տակը
— եւ գանկ մը՝ որ ո՛չ միայն շրջագիծով
կը նմանէր իմ գծագրածին՝ այլ եւ ամէն
կողմով . կ'ըսեմ որ այս դիպակցութեան
նորորինակութիւնը վայրկեան մը զիս ապ-

չեցուց պարզապէս: Ասիկա այս տեսակ դիպակցութիւններու արդիւնքն է: Միտքը կը ջանայ հաստատել կապ մը, յարաբերութիւն մը՝ պատճառին եւ արդիւնքին միջեւ — և ինքզինքը յաջողելու անկարող գտնելով կ'ենթարկուի վայրկեանական անդամալուծութեան մը. բայց երբ արթնցայ այս ապշուածէնէն, իմ մէջս զգացի աստիճանաբար երեւիլը համոզումի մը՝ որ դիպակցութեանն աւելի վարմացուց զիս: Պարզապէս սկսայ յիշել որ ո՛ր եւ է պատկեր մը չիկար մագաղաթին վրայ, երբ ուրուագիւրս չիկեցի: Կատարելապէս ստուգեցի աւիկա, որովհետեւ կը յիշեմ որ նախ զանիկա մէկ կողմէն միւսը դարձուցած էի, փնտռելու համար ամէնէն մաքուր տեղը, եթէ գտնելը հոն ըլլար, ուշադրութիւնս չպիտի կրնար վրիպիլ: Դադարեմ մը կար՝ զոր լուծելու անկարող կ'ըզգայի ինքզինքը. բայց այս վայրկեանէն դատողութեանըս ամենախորին եւ ամենէն ծածուկ մասերուն մէջ տկար լոյսի մը ծագիլը զգացի: Երբ տեսակ մը իմացական կայծոռիկ, սաղմնային յղացում մը ճշմարտութեան՝ որով մեր առջի դիշերուան դէպքը մեզի հայթայթեց այնքան մեծաշուք յայտնութիւն մը: Այն ատեն իսկոյն ելայ և մագաղաթը խնամքով սեղմելով, մէկտեղ վանեցի ամէն արտաքին մտածում, մինչեւ այն ատենը՝ ուր պիտի կրնայի մինակ մնալ:

Երբ դուք զիս թողուցիք եւ երբ ժիւրիդէր աղէկ մը քնացաւ, սկսայ զանիկա լաւ մը հետազոտել: Առաջին անգամ նրկատողութեան առիթ է ի՞նչ կերպով ձեռքըս հասաւ այդ մագաղաթը: Այն տեղը՝ ուրկէ գտած էի բզէզը, գաւառին ծովագերքին վրան էր, մղոն մը անդին՝ կղզիին արեւելակողմէն, եւ շատ քիչ հեռուն վերելակ ճահիճէն: Երբ զանիկա բռնեցի, այնչափ գէշ կերպով խայթեց զիս, որ ստիպուեցայ թողուլ զանիկա: Ժիւրիդէր իր սովորական խոհեմութիւնով, բռնելէ առաջ միջատը որ իր քովէն թռած էր, իր շուրջը փնտռեց տերեւ մը կամ անոր նման բան մը՝ որով կարենայ զանիկա բռնել: Այս վայրկեանին էր որ իր աչքերը և ձեռքերը ինկան մագաղաթի կտորի մը վրայ՝ զոր այն ատեն թուղթ կարծեցի: Կիսովին ծածկուած էր աւագին մէջ, իսկ մէկ մասը օդին

մէջ: Զանիկա գտած տեղերնուս մօտը՝ կը դիտէի մեծ նաւի մը կտորին մնացորդները որչափ որ կրնայի դատել անոր տեսքէն: Նաւարեկութեան այս կտորները այնպէս կը թուէր թէ երկար ժամանակ է ի վեր հոն էին, որովհետեւ հազիւ կը ճանչցուէր թէ նաւի մը տախտակն էր ան:

Թարգմ. ԱՇՈՏ Յ. ՊԱՋՊՁԵՆԱՆ

(Շարունակելի)

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ԺԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Արդէն նախապէս ծանուցած էինք թէ՝ նոր շրջանին մէջ ՀԱՆՐԱՊԵՏԱԿ՝ շաբաթաթերթի պիտի վերածուի: Երբ տարի մը առաջ սկսանք հրատարակել պատկերադարձ հանդէս մը, չէինք մտաբերեր թէ՝ այսքան համակրութիւն պիտի գտնէինք հասարակութեան եւ Հայ Մամուլին կողմէ: Իրաւ, նրկական քաջալերութիւնը շատ փայլուն չեղաւ, բայց կարող անձերու գնահատութիւնը բնաւ չի պակսեցաւ մեզի:

Փոխարինելու համար սոյն համակրութիւնը, զոր մեր ընթերցողները ցոյց կուտան մեզի նկատմամբ, ուզեցինք իբր տըպարանապետ մեր վայելած հրատարակչական ու տպագրական դիւրութիւններով հրատարակել թերթ մը՝ որ ամենէն աժան և արդիւնաւորն ըլլայ:

Կարող գրիչներու բարեհաճ օժանդակութիւնն ապահոված ըլլալով՝ այսօր կըրնանք մեր բաժանորդներուն ներկայացնել Հանրագիտակ մը (Encyclopédie), որ պիտի ջանայ արժանի ըլլալ իր անունին:

Թերթին պարունակութիւնը չգտ ճոխ պիտի ըլլայ, եւ պիտի կրնայ գոհացնել գրական ճաշակը մեր ընթերցողներուն, և յագեցնել անոր գիտական հետաքրքրութիւնը: Եւրոպայի ժամանակակից հեղինակներու, նշանաւոր պատկերահաններու,

քանդակագործներու, գիտուններու կենսագրութիւնները պիտի հրատարակենք իրենց լուսանկարներովը, նոյնպէս եթէ միջոցներնիս ներքին, հայ արուեստագէտներու, վաճառականներու լուսատիպ պատկերներն ևս, իրենց համառօտ կենսագրութիւններովը:

Նոր գիւտերը պիտի պարզենք յստակօրէն եւ միշտ պատկերներով, եւ պիտի ջանք ընել գործ մը՝ որ մինչեւ հիմա մեր մէջ չէ փորձուած, այդ է, ժողովրդացնել գիտութիւնը, մեզի առաջնորդ ունենալով՝ այդ ճիւղին մէջ հեղինակութիւն ձանջցուած Ֆլամարիօնի, Հըքսլիի, Տը Բարվիլի, եւ այլնի նման գիտուններու գործերը:

Իբր ժամանց պիտի հրատարակենք նաև նշանաւոր ճամբորդութիւններու, եւ աշխարհագրական գիւտերու պատմութիւններ, սիրուն հէքեթներ, առակներ և ոտանաւորներ:

Ամէն թիւի մէջ մեր ընթերցողներուն պիտի ուղղենք զուարճալի հարցումներ և խնդիրներ, եւ պիտի հրատարակենք նկարահանելուներ բնագիտական զօսանքներ, տղայոց խաղեր: Եւ մեթրական գրութեան դասընթացք մը պիտի հաստատենք, եւ գարնան մէջ, ծաղիկներու պզտիկ հաւաքածոյ մը շինելու համար ամփոփ յօդուած մը պիտի հրատարակենք:

Դպրոցի աշակերտն ու հրապարակի վերայ գործ ունեցող ամէն անհատ անհրաժեշտ պէտք ունին վաճառականական գիտութեան վրայ շատ մը ծանօթութիւններ ստանալու, ուղեցինք այդ անմիջական պէտքն ալ լրացնել եւ մեր Հանրագիտական օգտակար ընել ամէն գասակարգի ընթերցողներու:

Ինչպէս յայտնի է. երկու տարիէ ի վեր Առաջնորդ Վանառականացի տետր առ տետր կը հրատարակէր Բիւզանդիոնի ժրջան խմբագիրներէն Ժիրայր Շիրակացիի (Սիմօն էֆ. Չէօմէքեան) խմբագրութեամբ: Հրատարակութիւնը շատ օգտակար էր, և հեղինակը բոլորովին իր գործին մարդը, ջանք չէր խնայէր նիւթերու ճոխութեանը համար: Քանի մ'ամսէ ի վեր այդ պարբերական տետրակներուն հրատարակութիւնն

յապաղեցաւ զանազան պատճառներով: Արդ Չէօմէքեան էֆէնտիի հետ համաձայնելով՝ որոշեցինք չաբաթական Հանրագիտական ամսական մէկ թիւը (24 էջ) ամբողջովին յատկացնել առեւտրական յօդուածներու, խմբագրութեան հոգն իրեն ձգելով, եւ այսպէս ապահովել այդ օգտաշատ գործին յարատեւութիւնը: Վաճառականական գիտութեանց յատկացեալ թերթն ալ պիտի ըլլայ երբեմն պատկերազարդ, եւ ճիշդ Հանրագիտակի դիրքովը:

Քանի մը խօսք ալ նիւթականին համար: Հանրագիտակի դիրքը՝ տպարանիս դիւրութեան համար պիտի պզտիկնայ քիչ մը, այսինքն ուրիշ չաբաթաթերթերու գրեթէ հաւասար պիտի ըլլայ մեծութեամբ եւ պարունակութեամբ, իսկ էջերը միմիայն մէկ սինակի վրայ պիտի ըլլան: Իսկ ասոր փոխարէն Հանրագիտակի սովորական թիւը պիտի ունենայ առնուազն 18 էջ, իսկ Առեւտրական բաժնին իւրաքանչիւր թիւն՝ առնուազն 24 էջ:

Այս հաշուով Հանրագիտակի ամբողջ տարեշրջանը պիտի ունենայ 52 թիւ, որոնք պիտի ձեւացնեն առնուազն 1000 էջ, 150-200 պատկերներով զարդարուած, եւ պիտի ընդգրկէ գրական, առեւտրական, գիտական եւ զօսանքի վերաբերեալ նիւթեր:

Տարեկանը պիտի ըլլայ

Պոլսոյ համար	30	դր.
Գաւառներու համար	35	»
Հատը	30	փր.

Թղթատարի ծախքը մեր վրայ

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Անոնք որ կը փափաքին միմիայն Վաճառականական նիւթեր պարունակող 12 թիւերը ստանալ, կրնան զատ ընդունիլ, վճարելով միայն 12 դր. տասներկու թիւերու համար, թղթատարի ծախքը մեր վրայ ըլլալու պայմանաւ:

ԽՈՍՏ ԿՍՐԵՒՈՐ

Այն բաժանորդները որոնք նախապէս Առաջնորդ Վանառականացի երկրորդ հատորին համար վճարում ըրած են, պիտի ընդունին Հանրագիտակի վաճառականներու յատուկ թիւերը, մինչեւ որ իրենց բաժանորդագրութիւնն աւարտի, իսկ անոնք որ

մինչեւ ցայժմ բաժնեգիրն չեն վճարած եւ նախորդ հինգ թիւերը ստացած, թերթ չպիտի ընդունին՝ մինչեւ որ բաժնեգիրն չի վճարեն:

Առաջնորդ Վանաւականացի բաժանորդագրութեան համար պէտք է ուղղակի դիմել ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ հասցէին, իսկ խմբագրութեան համար՝ Սիմոն Չէօմէքճեանի:

Հասցէ

نشانه بربریان مطبعی

استیول باب عالی جاده سی و نمره ۳۸

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս Պապ-Ալի ձաճսէսի քիւ 38

NICHAN BERBERIAN

IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Bab-Ali Djaddessi N. 38

Բաժանորդ գրուիլ ցանկացողները ներ փակեալ ընդունելութեան տոմսը ստորագրելով՝ բաժնեգիրն հետ միասին պէտք է ղրկել մեզ:

ՀԱՆՐԱՔԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան Աֆիոնի Կարահիսար, Աշոտ էֆ. Պաղպաղեան Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան Եւրոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման Զմիւռնիա Կարապետ էֆ. Մալէճանեան Էրզնու, Տիգրան էֆ. Բրուտեան Թէֆրսալ, Ասատուր էֆ. Արսէնեան Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան Կիւրին, Միսաք էֆ. Խանդամուր Հալեայ, Ս. էֆ. Ամատեան Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան Մարաշ, Արտ. Տ. Նէրսէս Քէ. Շահինեան Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան Մամսօն, Յովհաննէս էֆ. Նիքուսարեան Սրվալ, Միգրան էֆ. Իսպիրեան Սիւնհաճի քոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան Վեզիր քոքրի » » » Տիարպէֆի, Լեւոն էֆ. Սրապեան



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՐԵՑՈՅՑԸ

43 ՊԱՏԻՐՆԵՐՈՎ, ԶԱՐԻԱՐՈՒՄ

Կը պարունակէ

ԲԱՍԻՄԻ սրամբոտ յօգուածները մեր ընտանեկան բարքերու վրայ,

Ա. ՓԱՆՈՍԵԱՆԻ ամէնէն սիրուն ոտանաւորներէն մէկ քանին,

Մ. ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆԻ Ակնցի Նոր թիփերը Ստրիտեա թանայրիի պատմութիւնը՝ Ակնցիներու բերնէ եղած, և թէ այդ տոհմակիցները ինչպէս կը մեկնեն հեռագրեր, Ֆօնօկա ռաֆը. Ելեֆտականութիւնը ևլն.:

Եւրոպական բոլոր Վեհապետներու և Վեհապետուհիներու պատկերներն ու անոնց իրարու հետ ունեցած ընտանեկան կապերը: Նաեւ զուարճալիքներ, առածներ, վէպեր, օգտակար գիտելիքներ, ևլն.:

Գին 5 դահեկան — Թղթասարով 6 դիկն.

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապ-Ալի ճատտէսի, Բաշիտ էֆ. խան, 38

ՏԵՏՐ ՄԵՆԱԳՐՈՑ

Զոր գծագրած ու վիմագրած է Պետրոս Վ. Բաշուհի, արհեստին վերջին ծայր կատարելութեամբ, Եւրոպայի նմանօրինակ զարդագրերու հետ մրցելու չափ: Կը պարունակէ 700 տարբեր վայելչազարդ ձեւերով գոյնզգոյն անդրլաւս զարդագրեր, իրենց տեսակին մէջ նոր, առաջինն ու վերջինը: Գեր. Հօր այս արուեստագիտական նոր գործն իբրեւ մենագիր զարդատառերու հաւաքածոյ մը շատ ու շատ օգտակար է տպագրիչներու, փորագրիչներու, վաճառականներու, նոյնպէս ամէն նրբաճաշակ անձանց համար, նամանաւանդ վարժարանաց մէջ ձեռագործի ճիւղին աշխատողաց, ինչպէս նաեւ հարսանեաց, հրաւիրագրերու և ճերմակեղէններու մարքա դնելու համար: Թէեւ 25 զրշ.ի որոշուած է սոյն տետրը ծախել, սակայն Աշճեան Գրատունը կէս առ կէս 12 զրշ.ի գեղջած է անոր գինը:

ԽՄԱԳՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԻՐ

ՄԱՐԲԵՆ ԱՌԻՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ


ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Պապ-Ալի ճատտէսի, Խիւ 38, Իգտամ լրագրին դէմ

346

376

958



խոսքից ճանադրանալով

ՀԱՅԿԱՅԻՆ ԲԱՐՈՋԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՆ

[illegible]

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՎԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ ԺՈՂՈՎԱՆՈՒԹՅԱՆ

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ և թէ օր ըստ օր սնուց թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ հաջողմ տալ նոյն իսկ էն խստապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք անդամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, Ճէլալ-Պէյ խանի շէր թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը: Ա.ԺԱ՛Ն Ա.ԺԱ՛Ն Ա.ԺԱ՛Ն

ՆԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ԶԱՏՏԵՍԻ, ԹԻԻ 38. ԻԴՏԱՄ ԼԲԱԳՐԻ ԴԻՄԱՅ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը տպագրէ ամեն տեսակ գիրքեր, մահագրքեր, հանդեսներ, քաղաքականներ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագրութիւններ, այցաւարդեր, եւ տպագրութեան վերաբերեալ ամեն տեսակ պիտոյքներ: — Տպարանին սեփական 2000է աւելի պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձրի:

Անմրցելի մաքրութիւն եւ նշանաւորութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամեն տեսակ յանձնարարութիւններ:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն մասնակցողները պարտին առն կտրոնը կտրելով՝ իրենց գըրութեանց հետ ղրկել Խմբագրութեան, հակառակ պարագային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հատ 40, իսկ գաւառաց մէջ 50 փարայ: